ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ (ՏԿՆ),

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ (ԱՍՀՆ),

ՄԱԿ-Ի ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ (ՅՈՒՆԻՍԵՖ),

ԻՋԵՎԱՆ, ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, ՃԱՄԲԱՐԱԿ, ՎԱՆԱՁՈՐ, ՍՊԻՏԱԿ, ԱԼԱՎԵՐԴԻ, ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ, ԱԽՈՒՐՅԱՆ ԵՎ ՊԵՄԶԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

ԵՎ

ՎԱՐԴԵՆԻՍԻ <ՊԱՐՏԵԶ> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՄԻՋԵՎ

**ՀՀ ԼՈՌՈՒ, ՏԱՎՈՒՇԻ, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Սեպտեմբեր, 2014 թ.

Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից

unicef

Ծրագիրն իրականացնում է

## ՆԱԽԱԲԱՆ

Այս փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ ՓՀ) արտացոլում է կողմերի (այսուհետ՝ Կողմեր) համատեղ համագործակցության ըմբռնումը և համաձայնությունը տարածքային սոցիալական ծրագրերի և հարակից համայնքային ենթածրագրերի իրականացման ընթացքում, ՅՈՒՆԻՍԵՖ-ի Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող <*Աշխատանքային միգրացիայի սոցիալական հետևանքների մեղմացման և տեղական զարգացման գործընթացում միգրանտների ներգրավվածության մեծացման*> ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում:

**Հաշվի առնելով այն**, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ը և ՏԿՆ-ն ճանաչել են տարածքային սոցիալական պլանավորման (այսուհետ՝ ՏՍՊ) աջակցությունը՝ սոցիալական ենթածրագրերի իրականացման միջոցով, որպես հիմնական գործունեություն Երկամյա համատեղ աշխանանքային ծրագրի 2014-2015 շրջանակներում,

**Հաշվի առնելով այն**, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ը և ԱՍՀՆ-ն ճանաչել են ինտեգրված սոցիալական ծառայությունների բարեփոխումները, որպես հիմնական գործունեություն Երկամյա համատեղ աշխանանքային ծրագրի 2014-2015 շրջանակներում,

**Հաշվի առնելով այն**, որ տարածքային սոցիալական ծրագրերը մշակվել են Լոռու, Տավուշի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերում ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ և տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությամբ: Յուրաքանչյուր ծրագրի անբաժանելի մասն են կազմում մի շարք համայնքային ենթածրագրեր,

**Հաշվի առնելով այն**, որ Կողմերը պատրաստակամ են մշակված տարածքային սոցիալական ծրագրերի և համապատասխան համայքային ենթածրագրերի իրականացմանը՝ ի շահ համայնքի, Ծրագրի շրջանակներում ստեղծվել էր ընտրական հանձնաժողով՝ տարածքային կառավարման նախարարության համակարգմամբ և կազմված հետևյալ ներկայացուցիչներից՝ ԱՍՀՆ, փոխմարզպետներ և ՅՈՒՆԻՍԵՖ: Հանձնաժողովի՝ ս.թ. մայիսի 7-ի հանդիպման ժամանակ, ընտրվել են 10 համայնքային ենթածրագրեր, որոնք կհամաֆինանսավորվեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից՝ Ծրագրի շրջանակներում:

Հիմք ընդունելով փոխադարձ վստահությունը և ջերմ համագործակցությունը՝ **Կողմերն այսուհետ համաձայնում են հետևյալը՝**

## 1. ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն ՓՀ-ի նպատակն է սահմանել Կողմերի դերերը և պարտականությունները համայնքային ենթածրագրերի իրականացման ընթացքում, որոնք կազմում են Լոռու, Տավուշի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերում մշակված տարածքային սոցիալական ծրագրերի մի մաս և որոնք նկարագրված են մանրամասնորեն սույն ՓՀ-ի Հավելված 1-ում:

ՓՀ-ն պետք է կառավարի համայնքային ենթածրագրերի իրականացման, կառավարման, ֆինանսավորման և հաշվետվության կազմման գործընթացները:

## ՆԱԽԱԲԱՆ

Այս փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ ՓՀ) արտացոլում է կողմերի (այսուհետ՝ Կողմեր) համատեղ համագործակցության ըմբռնումը և համաձայնությունը տարածքային սոցիալական ծրագրերի և հարակից համայնքային ենթածրագրերի իրականացման ընթացքում, ՅՈՒՆԻՍԵՖ-ի Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող <*Աշխատանքային միգրացիայի սոցիալական հետևանքների մեղմացման և տեղական զարգացման գործընթացում միգրանտների ներգրավվածության մեծացման*> ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում:

**Հաշվի առնելով այն**, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ը և ՏԿՆ-ն ճանաչել են տարածքային սոցիալական պլանավորման (այսուհետ՝ ՏՍՊ) աջակցությունը՝ սոցիալական ենթածրագրերի իրականացման միջոցով, որպես հիմնական գործունեություն Երկամյա համատեղ աշխանանքային ծրագրի 2014-2015 շրջանակներում,

**Հաշվի առնելով այն**, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ը և ԱՍՀՆ-ն ճանաչել են ինտեգրված սոցիալական ծառայությունների բարեփոխումները, որպես հիմնական գործունեություն Երկամյա համատեղ աշխանանքային ծրագրի 2014-2015 շրջանակներում,

**Հաշվի առնելով այն**, որ տարածքային սոցիալական ծրագրերը մշակվել են Լոռու, Տավուշի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերում ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ և տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությամբ: Յուրաքանչյուր ծրագրի անբաժանելի մասն են կազմում մի շարք համայնքային ենթածրագրեր,

**Հաշվի առնելով այն**, որ Կողմերը պատրաստակամ են մշակված տարածքային սոցիալական ծրագրերի և համապատասխան համայքային ենթածրագրերի իրականացմանը՝ ի շահ համայնքի, Ծրագրի շրջանակներում ստեղծվել էր ընտրական հանձնաժողով՝ տարածքային կառավարման նախարարության համակարգմամբ և կազմված հետևյալ ներկայացուցիչներից՝ ԱՍՀՆ, փոխմարզպետներ և ՅՈՒՆԻՍԵՖ: Հանձնաժողովի՝ ս.թ. մայիսի 7-ի հանդիպման ժամանակ, ընտրվել են 10 համայնքային ենթածրագրեր, որոնք կհամաֆինանսավորվեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից՝ Ծրագրի շրջանակներում:

Հիմք ընդունելով փոխադարձ վստահությունը և ջերմ համագործակցությունը՝ **Կողմերն այսուհետ համաձայնում են հետևյալը՝**

## 1. ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն ՓՀ-ի նպատակն է սահմանել Կողմերի դերերը և պարտականությունները համայնքային ենթածրագրերի իրականացման ընթացքում, որոնք կազմում են Լոռու, Տավուշի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերում մշակված տարածքային սոցիալական ծրագրերի մի մաս և որոնք նկարագրված են մանրամասնորեն սույն ՓՀ-ի Հավելված 1-ում:

ՓՀ-ն պետք է կառավարի համայնքային ենթածրագրերի իրականացման, կառավարման, ֆինանսավորման և հաշվետվության կազմման գործընթացները:

## 2. ԴԵՐԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը համաձայնում են իրականացնել իրենց պարտականությունները ՓՀ-ի դրույթների համապատասխան և ըստ լիարժեք հաշվետվողականության, թափանցիկության, ներքին կառավարման վերահսկման սկզբունքների, և նշված վերահսկողության մեխանիզմների:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը համաձայնում է՝

- Ապահովել համայնքային ենթածրագրերի ֆինանսական աջակցություն, որի գումարը չի գերազանցում նախատեսված բյուջեները ըստ սույն ՓՀ-ի Հավելված 1-ի ծրագրի նկարագրությունների:
- Ապահովել փորձագիտական աջակցություն ՏԿՆ-ին համայնքային ենթածրագրերի իրականացման համակարգման ընթացքում:
- Կառավարել և վերահսկել համայնքային ենթածրագրերի իրականացումը շարունակական հիմունքով:

ՏԿՆ համապատասխան մարզպետարանի միջոցով համաձայնում է՝

- Համակարգել համայնքային ենթածրագրերի իրականացումը իրականացման ամբողջ փուլի ընթացքում:
- Վերահսկել համայնքային ենթածրագրերի իրականացումը շարունակական հիմունքով՝ հաստատելով, որ նրանք ուղղված են տվյալ տարածաշրջանում որևէ սուր սոցիալական խնդրի հասցեագրմանը:

ԱՍՀՆ համաձայնում է.

- Աջակցել թիրախային մարզերում ենթածրագրերի համակարգմանը սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների միջոցով:

Դրամաշնորհ ստացող համայնքները և <Պարտեզ> բարեգործական հիմնադրամը համաձայնում են՝

- Իրականացնել համայնքային ենթածրագրերը համաձայն սույն ՓՀ-ի Հավելված 1-ի համապատասխան ծրագրի նկարագրությունների, բյուջեների և ժամկետների:
- Կառավարել տրամադրված միջոցները պատշաճ և թափանցիկ ձևով:
- Ապահովել համաֆինանսավորում կամ կատարել ներդրում ենթածրագրերի իրականացման ընթացքում:
- Զեկուցել ենթածրագրերի իրականացման ընթացքում առաջացած որևէ խնդիրների և փոփոխությունների մասին:
- Համակարգել հանրային տեսանելիության գործունեությունը ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ՝ ապահովելով լիարժեք տեսանելիութուն ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի ուղեցույցի համապատասխան:

## 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ենթածրագրերի իրականացման ընթացքում դրամաշնորհ ստացողները (համայնքները և <Պարտեզ> բարեգործական հիմնադրամը) կտրամադրեն պատմողական և ֆինանսական հաշվետվություն ՅՈՒՆԻՍԵՖ-ին և ՏԿՆ-ին:

Պետք է պատրաստվեն երկու ֆինանսական և պատմողական հաշվետվություններ՝

- Ծրագրի իրակացման կեսին (ծրագրի տևողության կեսին),
- Ծրագրի իրականացման վերջում:

Պատմողական հաշվետվությունները պետք է պարունակեն տեղեկություններ համայնքային ենթածրագրերի իրականացման առաջընթացի մասին և գնահատեն ծրագրի ընդհանուր ազդեցությունը: Ֆինանսական հաշվետվությունները պետք է պարունակեն ստացված և ծախսված միջոցների ակնարկը ըստ կատեգորիաների և ՅՈՒՆԻՍԵՖ-ի ֆինանսական հաշվետվությունների ձևերի:

## 4. ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

Սույն ՓՀ-ն ուժի մեջ կմտի Կողմերի ստորագրելուց հետո:

ՓՀ-ն կարող է փոփոխվել Կողմերի գրավոր փոխադարձ համաձայնությամբ, որը կդառնա ՓՀ-ի բաղկացուցիչ մաս՝ Հավելվածի տեսքով:

Յուրաքանչյուր Կողմ կարող է ամբողջությամբ կամ մասամբ դադարեցնել սույն ՓՀ-ն՝ այլ կողմերին ներկայացնելով իր գրավոր ծանուցումը երեսուն (30) օր առաջ: Մասնակի դադարեցման դեպքում՝ այդպիսի ծանուցումը պետք է պարունակի դադարեցվող գործունեության ցանկը:

Ի հաստատում վերոհիշյալի՝ ներքոստորագրյալներս, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցինք սույն ՓՀ-ը ________________ Երևան քաղաքում, անգլերեն և հայերեն լեզուներով՝ երեք հավասարազոր բնօրինակից:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն**

Արմեն Գևորգյան, ՀՀ փոխվարչապետ,

ՀՀ տարածքային կառավարման նախարար

Ստորագրություն

**ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն**

Արտեմ Ասատրյան

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

Ստորագրություն

**ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ**

Հենրիետ Աիրենս

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչ

Ստորագրություն

ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

**Նոյեմբերյան համայնք**
Վանուշ Ամիրաղյան
Համայնքի ղեկավար
Ստորագրություն

**Իջևան համայնք**
Վարդան Ղալումյան
Համայնքի ղեկավար
Ստորագրություն

**Ճամբարակ համայնք**
Յուրիկ Ավալյան
Համայնքի ղեկավար
Ստորագրություն

**Սպիտակ համայնք**
Գագիկ Սահակյան
Համայնքի ղեկավար
Ստորագրություն

**Ալավերդի համայնք**
Արտավազդ Վարոսյան
Համայնքի ղեկավար
Ստորագրություն

**Վանաձոր համայնք**
Սամվել Դարբինյան
Համայնքի ղեկավար
Ստորագրություն

**Սառնաղբյուր համայնք**
Սևակ Մաղաթյան
Համայնքի ղեկավար
Ստորագրություն

**Ախուրյան համայնք**
Լիպարիտ Տիգրանյան
Համայնքի ղեկավարի տեղակալ
Ստորագրություն

**Պեմզաշեն համայնք**
Անանիկ Ոսկանյան
Համայնքի ղեկավար
Ստորագրություն

**Վարդենիսի <Պարտեզ> բարեգործական հիմնադրամ**
Սուսաննա Մանուկյան
ԲՀ-ի նախագահ
Ստորագրություն

Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից

unicef

Ծրագիրն իրականացնում է